Հավելված N 210
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.6-Մ2-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը կամ Վարչության ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած՝ գյուղատնտեսության ոլորտին առնչվող (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու և դրամաշնորհային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին) ծրագրերի և աշխատանքները,
2. Իրականացնում է միջազգային զարգացման ծրագրերի իրականացման շրջանակներում աշխատանքների կատարման ընթացիկ ժամանակացույցի և ծրագրերի նախահաշիվների կազմումը,
3. Իրականացնում է միջազգային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով մրցույթների անցկացումը, առաջարկների գնահատումն ու վերլուծումը.
4. Իրականացնում է միջազգային զարգացման ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացման որակի, ժամկետների և կատարման նկատմամբ հսկողությունը,
5. մասնակցում է գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության իրականացումից բխող արդյունքների ուսումնասիրության և համապատասխան միջոցառումների կիրառման գործընթացներին.
6. Իրականացնում է միջազգային զարգացման և պետական օժանդակության ծրագրերի իրականացման աշխատանքներում ընդգրկված կազմակերպությունների հետ աշխատանքների իրականացումը և դրանց ընթացքում առաջացած խնդիրների լուծման գործընթացը,

7. Իրականացնում է տեղական, ինչպես նաև միջազգային զարգացման կազմակերպությունների հետ համագործակցությունը,
8. մասնակցում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության ծրագրային փաստաթղթով նախատեսված միջոցառումների սահմանված կարգով իրականացմանը:

Իրավունքները՝

• Ստանալ առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած՝ գյուղատնտեսության ոլորտին առնչվող (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու և դրամաշնորհային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին) ծրագրերի վերաբերյալ,
• Ստուգել միջազգային զարգացման ծրագրերի իրականացման շրջանակներում աշխատանքների կատարման ընթացիկ ժամանակացույցի և ծրագրերի նախահաշիվները,
• Ստանալ առաջարկություններ միջազգային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով մրցույթների անցկացման մասին,
• Ստուգել միջազգային զարգացման ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացման որակը, ժամկետները,
• Ստանալ առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության իրականացումից բխող արդյունքների ուսումնասիրության և համապատասխան միջոցառումների վերաբերյալ.
• Տալ կարծիք միջազգային զարգացման և պետական օժանդակության ծրագրերի իրականացման աշխատանքներում ընդգրկված կազմակերպությունների հետ աշխատանքների և դրանց ընթացքում առաջացած խնդիրների լուծման վերաբերյալ,
• Ստանալ առաջարկություններ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության ծրագրային փաստաթղթով նախատեսված միջոցառումներն իրականացնելու վերաբերյալ:

Պարտականությունները՝

• Ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած՝ գյուղատնտեսության ոլորտին առնչվող (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու և դրամաշնորհային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին) ծրագրերի վերաբերյալ,
• Հետևել միջազգային զարգացման ծրագրերի իրականացման շրջանակներում աշխատանքների կատարման ընթացիկ ժամանակացույցի և ծրագրերի նախահաշիվները,
• Ներկայացնել առաջարկություններ միջազգային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով մրցույթների անցկացման մասին,
• Հետևել միջազգային զարգացման ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացման որակը, ժամկետները,
• Ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության իրականացումից բխող արդյունքների ուսումնասիրության և համապատասխան միջոցառումների վերաբերյալ.
• Վերլուծել միջազգային զարգացման և պետական օժանդակության ծրագրերի

իրականացման աշխատանքներում ընդգրկված կազմակերպությունների հետ աշխատանքները և դրանց ընթացքում առաջացած խնդիրները,

• Ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության ծրագրային փաստաթղթով նախատեսված միջոցառումներն իրականացնելու վերաբերյալ:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բողոքների բավարարում
2. Բանակցությունների վարում
3. Ժամանակի կառավարում
4. Կոնֆլիկտների կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեություն որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: